

A 12.00.01
Խ-28

Հայաստանի Հանրապետության
Պետական Կառավարման Ակադեմիա

Խաչատրյան Արտյոմ Գագիկի

**ԲՆԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՀԱՅԱՑՔՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ ԵՎ
ԶԱՐԳԱՅՈՒՄԸ ԱՐԵՎՄՏԱԵՎՐՈՊԱԿԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ
ՈՒՍՄՈՒՆՔՆԵՐՈՒՄ (ՊԱՏՄԱՏԵՍԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ)**

ԺԲ.00.01-«Պետության և իրավունքի տեսություն և պատմություն, իրավական
ուսմունքների պատմություն» մասնագիտությամբ իրավաբանական
գիտությունների թեկնածուի զիտական աստիճանի հայցման
ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻԴ

Երևան-2011

Академия государственного Управления Республики Армения

Хачатрян Артем Гагикович

**ФОРМИРОВАНИЕ И РАЗВИТИЕ ПРЕДСТАВЛЕНИЙ
ЕСТЕСТВЕННОГО ПРАВА В ЗАПАДНОЕВРОПЕЙСКИХ
ПРАВОВЫХ УЧЕНИЯХ
(ИСТОРИКО-ТЕОРЕТИЧЕСКИЙ АНАЛИЗ)**

Автореферат

Диссертация на соискание ученой степени кандидата юридических наук по
специальности
12.00.01-«Теория и история государства и права, история правовых учений».

Ереван-2011


Ատենախոսության թեման հաստատվել է Հայաստանի Հանրապետության ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի գիտական խորհրդում

- Գիտական ղեկավար՝ իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր **Հ. Մ. Ստեփանյան**
- Պաշտոնական ընդդիմախոսներ՝ իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր **Վ. Վ. Ստեփանյան**

իրավաբանական գիտությունների թեկնածու, **Հ. Ջ. Մարգարյան**
- Առաջատար կազմակերպություն՝ **ՀՀ Սահմանադրական իրավունքի կենտրոն**

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2011 թվականի Հունիսի 28-ին ժամը 16:30-ին ՀՀ պետական կառավարման ակադեմիայում գործող ԲՈՀ-ի 041 մասնագիտական խորհրդի նիստում (0028, Երևան-28, Կիևյան 8):
Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ պետական կառավարման ակադեմիայի գրադարանում:

Եղմագիրն առարվել է 2011 թվականի մայիսի 27-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր  **Ա. Հ. Խաչատրյան**

Тема диссертации утверждена в Институте философии, социологии и права НАН Республики Армения

- Научный руководитель: Доктор юридических наук, профессор **О.М. Степанян**
- Официальные оппоненты: Доктор юридических наук, профессор **В.В. Степанян**

Кандидант юридических наук, **О.З. Саргсян**
- Ведущая организация **Центр конституционного права Республики Армения**

Защита состоится 28-ого июня 2011 г. В 16:30 часов на заседании специализированного совета ВАК 041 при Академии государственного управления РА (0028, г. Ереван, ул. Кисевяна 8).
С диссертацией можно ознакомиться в библиотеке Академии государственного управления Республики Армения.

Автореферат разослан 27-ого мая 2011г.

Ученый секретарь специализированного совета:  **А. Г. Хачатрян**
Доктор юридических наук, профессор



3674-2011

Աշխատանքի ընդհանուր բնութագիրը

Հետազոտության թեմայի արդիականությունը. Արևմտյան քաղաքակրթություններում ծնունդ առած, մասնավորապես, անտիկ դարաշրջանում ձևավորման առաջին իսկ դարերից սկսած և ընդհուպ մինչև 19-20-րդ դարերի հայեցակարգերը բնական իրավունքի բնագավառում հետազոտությունները սովորական էին իրավական և փիլիսոփայական գիտությունների համար: Արևմուտքում բնական իրավունքի էության և այդ շրջանակներում ավանդաբար ուսումնասիրվող հիմնահարցերի վերաբերյալ բանավեճերը ամենասուր և ամենաաշխույժներից են¹: Այն հարցի կապակցությամբ, արդյո՞ք «բնական իրավունք», «բնական օրենքներ» հասկացություններն այսօր էլ պահպանում են իրենց նշանակությունը՝ իրավակազմիտության մեջ թե՛ վե՛ճերի տեղիք են տվել: Ամերիկացի գիտնական Լեո Ստրոսսը իր բազմիցս վերահրատարակված «Բնական իրավունքը և պատմությունը» գրքում գրում է. «Հասարակության մասին ժամանակակից գիտությունը... հսկված է այն թեզին, որ բոլոր մարդիկ ուղղորդվում են էվոլյուցիոն գործընթացով կամ միատիկ ճակատագրով... բաց, ինչ ասել կուզի, ոչ իրավունքով: Բայց, այնուամենայնիվ, բնական իրավունքի պահանջը այսօր նույնքան ակներև է, որքան և հարյուրամյակներ և նույնիսկ հազարամյակներ առաջ»²:

Ինչպես իրավագիտորեն նշում է պրոֆեսոր Գ.Գ. Հարությունյանը. «Հայ նոր իրականության բնորոշ առանձնահատկությունն այն է, որ մենք կանգնած ենք արժեհամակարգային վերախմաստավորման և մեր ինքնության լինելիության խորհուրդը նորովի մեկնաբանելու անհրաժեշտության առջև: Մենք դատապարտված ենք հաղորդակցելու այնպիսի արժեքների հետ, որոնք մեզ կամ խորթ, կամ անհասանելի են եղել:

Ինչպե՞ս են առաջացել այդ արժեքները, ինչպե՞ս են ձևաչվել ու մեկնաբանվել իրենց ծագումնաբանական սկզբունքներում, ինչպե՞ս են դարձել համակարգ ու կենսակերպ՝ դեռևս հազարավոր տարիներ առաջ, հարցեր, որոնց այժմեականությունը դժվար է գերազնահատել»³:

Անցյալում կուտակված փորձին և գիտելիքներին, պատմական զարգացման ընթացքում ստուգված հայեցակարգերին, մտքի չափանիշներին, ավանդույթներին, դասականներին և արժեքների կայունության համակար-

¹ Տե՛ս Ըարթոկով Ի.Ի. Развитие правопонимания в европейской традиции права. СПб., 2006: Гарольд Дж. Берман. Западная традиция права: эпоха формирования. М., 1998:

² Strauss L. Natural Right and History. Chicago. 1953 էջ 17.

³ Հարությունյան Գագիկ. Նախաբան՝ «Արիստոտել» Աթենական համակարգը: Թարգմ. Մ. Հարությունյանի: Երևան, 2000, էջ 5:

գերին դիմելը բոլոր ժամանակներում հանդես է եկել որպես մարդկային բանականության և մտքի ինքնագնահատման, ինքնաճանաչման և վերախմբման անհրաժեշտ ձևերից մեկը:

Այս տեսանկյունից, գտնում ենք, որ խիստ արդիական է հետազոտել մարդկային բանականության և մտքի անանց արժեք հանդիսացող բնական իրավունքի հայեցակարգային պատմական զարգացման հիմնական ուղենիշները, նրա դրսևորած բազմազանությունը և առանձնահատկությունները, ինչպես նաև այդ հայեցակարգի դերն ու նշանակությունը մարդկային կյանքի ճիշտ և օպտիմալ կառուցվածքի, պոզիտիվ իրավունքի զարգացման և մարդու իրավունքների պաշտպանվածության ապահովման հարցերում:

Գիտության պատմական զարգացման ընթացքում իրավունքի և պետության մասին ուսմունքների, ինչպես նաև գոյի բնական, թե աստվածային կարգից կամ էլ մարդու բնական հատկանիշներից բխող էթնիկական ուսմունքների համակարգում բնական իրավունքը հանդես է գալիս որպես հիմնական հասկացություն: Բնական իրավունքի տեսության պատմական գործառույթը դարաշրջանի ոգուն համապատասխան իրավական իդեալներ արտահայտելն էր:

Դեռևս 19-րդ դարի ռուս նշանավոր իրավագետները համարում էին, որ բնական իրավունքի բուն բնագավառը, ի տարբերություն դրական իրավունքի բնագավառի, ճշմարտության, արդարության պահանջների բնագավառն է, ընդհանուր իրավական նորմերի համակարգն է, որը բխում է մարդկային բանականությունից և պետք է պարտադիր չափանիշ և ուղեցույց ծառայի դրական իրավունքի համար⁴:

Իրավական իդեալը պատշաճն է, և այդ իմաստով իրավունքն աշխարհին տիրապետելու հոգևոր-գործնական ձև է: Իրավունքի էության իրապես խորը ճանաչումը անհնար է միայն իրավաբանական գիտության սահմաններում: Այդ իսկ պատճառով բնական իրավունքի մասին պատկերացումների պատմական զարգացման հետազոտությունը հնարավորություն է տալիս ավելի ակներև դարձնել իրավունքի և սոցիալական էվոլյուցիայի միասնականությունը, գիտակցել ներկա ժամանակներում էլ զարգացող իրավական նորմերի, իրավական իդեալների, իրավական ինստիտուտների ձևավորման նախադրյալները:

⁴ Ст. u Чичерин Б.Н. История политических учений. Том 1 Санкт-Петербург, 2006, с. 404-407: Лотцки, Общее государственное право. М., 2006, с. 18-19; Котляревский С.А. Конституционное государство. Юридические предпосылки русских Основных Законов. Под редакцией с предисловием В.А. Томсинова. М., 2004, с. 68-69; Коркунов Н.М. Лекций по общей теории права. СПб., 2004, с. 37-41 և այլն:

Այս բոլոր հարցերը կենտրոնանում են բնական իրավունքի հիմնական հայեցակարգերի էլակետային հիմնախնդիրներում, մարդու ազատության և բնության մեջ ու սոցիումում նրա գոյության զուգորդման հիմնախնդրում, անհատի իրավաչափ վարքի կարգավորման գործում բարոյական նորմերի և իրավական օրենքի փոխգործողության հիմնախնդրում, հասարակության իրավական մշակույթի բնույթը բնորոշող բարոյական-իրավական իդեալների էության հիմնախնդիրներում և այլն: Հենց բնական իրավունքի մասին ուսմունքի սահմաններում է ջանում իրավաբանական գիտությունը գտնել իրավունքի ու օրենքի հարաբերակցության հարցի պատասխանը, հասկանալ, որ իրավական սկզբունքներն ու նորմերը փաստացի հասարակական հարաբերությունների հատուկ ձև են՝ ունիֆիկացված ձև, որում գոյություն ունի ներքին տրամաբանություն՝ որպես կոնկրետ իրահարաբերությունների ներդաշնակության արտահայտություն:

Բնական իրավունքի տեսության զարգացման պատմատեսական հետազոտության ընթացքում առաջանում է որոշակի բարդություն՝ կապված այն բանի հետ, որ պատմական տարբեր դարաշրջաններում այս հասկացության մեջ ներդրվում էր միանգամայն տարբեր իմաստ ու բովանդակություն:

Կիկերոնի և հռոմեական իրավաբանների մոտ հստակորեն ձևավորված իրավաբանական այս հասկացության իմաստը այլ երանգավորում է ստանում միջնադարում: Երբ ժամանակների մտածողների հայեցակարգում այն ձեռք է բերում առավել կոնկրետություն և կատեգորիալ հստակություն: Գերմանական դասական փիլիսոփայության զարգացման դարաշրջանում կատարվում է փիլիսոփայա-իրավական պարադիգմների փոփոխություն՝ ազատության հասկացության հայեցակարգային բովանդակության պարունակության հետ կապված, այդ հասկացությունը ձևափոխվում է իրավական կատեգորիաների դեղուկ-ցիայի, էլակետի:

Իրավունքի տեսաբանները մինչև այժմ վիճարկում են այս հասկացության տարատեսակ այն մեկնությունները, որոնք բխում են անցյալի նշանավոր իրավաբանների և փիլիսոփաների հայեցակարգից: Երբ բնական իրավունքի գաղափարն օգտագործվում է հռոմեական իրավունքի ու քրիստոնեական աստվածաբանության քննարկման ժամանակ, այն շատ դեպքերում թվում է քիչ հասկանալի ու բացատրության կարոտ:

Բնական իրավունքի հայեցակարգը ոչ միշտ է համակերպվում այն տեսական և գործնական համատեքստերի հետ, որոնցում հիշատակվում է: Այն օգտագործվում է շատ անգամ, սակայն ոչ միշտ հետևողական ձևով: Սակայն նրա ոչ հետևողական օգտագործման դեպքերը սովորաբար այնքան աննշան կերպով են տարբերվում միմյանցից, որ դժվար է ասել, թե նրանցից որն է գերիշխողը: Այնուամենայնիվ, մենք առնչվում ունենք իրավական իրակա-

նության այս կամ այն տարատեսակի շրջանակներում հասարակական և անհատական բարոյականության չափորոշիչների հիմնավորման փորձի հետ: Երբ հարց է ծագում բնական իրավունքի մասին, ամեն դեպքում միշտ էլ գտնվում է ընդհանուր բովանդակություն կապված իրավունքի ու օրենքի, իրավունքի ու բարոյականության, անձի ազատության ու սոցիալական անհրաժեշտության, մարդու բնական իրավունքների ու նրա պարտականությունների հարաբերությունների, հասարակության մեջ հաստատուն և կայուն արժեքների համակարգի ու իրավունքի զարգացման պատմության ընթացքում, դրանց փոփոխության, հարաբերակցության և օրինաչափությունների հիմնահարցերի հետ:

Այս բոլոր կատեգորիաները պահպանում են իրենց հետազոտության արդիականությունը նաև ժամանակակից իրավաբանական գիտության համար: Դրա հետ մեկտեղ, այսօր առավել ակներև է դառնում իրավունքի ընդհանուր տեսության շրջանակներում այս հասկացությունների ինտեգրման հայեցակարգային հիմնավորումների անբավարարությունը: Որպես այդպիսի հիմնավորում պատմականորեն առավել հաճախ հանդես է գալիս բնական իրավունքը: Այդ իսկ պատճառով նրա պատմական զարգացման հետազոտության, բնական-իրավական տարբեր տեսությունների բուն էության բացահայտումը, արդի իրավաբանական մտածողության դիրքերից դրանց վերահիմնավորման խնդիրը խիստ արդիական է թե՛ տեսական և թե՛ գործնական առումով:

Օրենսդրություն ներկայացված իրավունքը կարող է դիտվել որպես հասարակության ու պետության կյանքում իրավական գաղափարախոսության տեսքով արտահայտված արժեքների որոշակի համակարգի իրագործման գործիք: Ինչպես յուրաքանչյուր գործիք՝ օրենսդրությունն ինքնին չէզոք է: Այն կարող է օգտագործվել ինչպես արդարության, մարդասիրության, գթության գերազույն սկզբունքների կենսագործման համար, այնպես էլ քաղաքացիական հասարակության և պետության անվտանգության համար կործանարար մարդատյացական նկրտումներով: Արդիական ենք համարում հետազոտել այնպիսի իրավական համակարգի ձևավորումը, որը հիմնվում է ինչպես ազգային, այնպես էլ համամարդկային արժեքների ու իդեալների վրա, որ իրագործվելով իրավական օրենքի շրջանակներում, աջակցում է ազգային պետականության բարոյաիրավական հիմքերի ամրապնդմանը: Այդպիսի խնդրի առջև են կանգնած նաև հետխորհրդային անկախ պետությունները: Մասնավորապես, ռուս պրոֆեսոր Գ. Վ. Մալցևը նշում է «Հավատն առ իրավունքը բռնկվել է Ռուսաստանում, որն այսօր ապրում է, թերևս, իր պատմության ամենադժվար ժամանակները: Մենք տեսնում ենք ինչպես են մարդիկ ձգտում դեպի իրավական կյանքի իդեալները, ինչպես են հակված գործնական նպատակը իրավունքի գերակայության, իրավական պետության, օրինակա-

նության, արդար դատարանի և այլնի գաղափարների կենսագործման ճանապարհին: Այլ կերպ ասած՝ մարդիկ ձգտում են կենսագործել մինչև վերջ չպարզաբանված գաղափարներ, որոնց վերաբերյալ մասնագետ-իրավագետները մինչև այժմ էլ վիճաբանում են և ոչ միշտ են կարող արդյունավետ հանձնարարականներ տալ»⁵:

Անհրաժեշտ է նկատել, որ բնական իրավունքի հարցադրումներն ավանդական են արևմտյան իրավական մտքի համար, և այդ իդեալները արդիական են նաև հետխորհրդային իրավական համակարգերի համար: Այս առումով միայն պատմական հաջորդականության հիման վրա, ինչպես նաև հաշվի առնելով եվրոպական և համաշխարհային իրավական մտքի նվաճումները, հնարավոր կլինի ձևավորել առողջ բարոյական-իրավական մթնոլորտ հասարակության բնականոն զարգացման համար:

Թեմայի ուսումնասիրության վիճակը. Հայրենական իրավագիտության մեջ բնական իրավունքի, արդարության և ազատության, իրավունքի գերակայության, սահմանադրական օրինականության և սահմանադրական մշակույթի հիմնահարցերով իրենց ծանրակշիռ խոսքն են ասել Վ. Ռ. Նազարյանը, Վ. Վ. Ստեփանյանը, Ա. Շ. Հարությունյանը, Գ. Գ. Հարությունյանը, Հ. Մ. Ստեփանյանը⁶:

Բնական իրավունքի հասկացության, նրա ձևավորման, բնական-իրավական նորմերի, իրավունքի աղբյուրների ու բովանդակության, պոզիտիվ իրավունքի հետ հարաբերակցության, այդ թվում նաև այդ թեմայի պատմական-իրավական առումների հարցերով գոյություն ունի ծավալուն գրականություն: Այդ հիմնահարցերը բարձրացվել են դեռ անտիկ դարաշրջանի մեծագույն մտածողների աշխատություններում, իրենց զարգացումն այնուհետև գտնելով Թոմաս Աքվինացու, Թ. Հոբբսի, Ջ. Լոկի, Բ. Սպինոզայի, Հ. Գրոցիոսի, Ի. Կանտի, Գ. Հեգելի և այլոց ստեղծագործական ժառանգության մեջ:

⁵ Мальцев Г. В. Понимание права. Подходы и проблемы. М., 1999, с. 3.

⁶ Տե՛ս. Նազարյան Վ.Ռ. Հայաստանի Հանրապետության սահմանադրության կոնցեպցիան: Երևան, 1992, Степанян В.В. Социальные интересы и социалистическое право. Ереван, 1980, Նույնի, Выражение интересов общества и личности в социалистическом праве. Ереван 1983, Նույնի. Социальная справедливость и социалистическое право. Ереван, 1987, Арутюнян Армен. Грамматика свободы (проблемы постсоветского реализма). Ереван, 2007, Հարությունյան Գ.Գ. Իրավունքի գերակայության սահմանադրական երաշխիքները: Երևան, 2003, Նույնի, Սահմանադրական մշակույթ. պատմության դասերը և ժամանակի մարտահրավերները: Երևան, 2005; Նույնի Constitutional culture: The Lessons of History and the chalanges of time. Yerevan, 2009, Арутюнян Г.Г., Баглай М.В. Конституционное право. Энциклопедический словарь. М., 2006, Ստեփանյան Հ.Մ. Իրավունքի տեսության հիմնահարցերը. ֆենոմենոլոգիական մոտեցում: Երևան, 2006:

Պատմության տարբեր դարաշրջանների քաղաքական, սոցիալական և տնտեսական պայմանների առանձնահատկությունները կանխորոշում են դիրքորոշումների ու մտեցումների բազմազանությունը իրավունքի ու բարոյականության, անձի ազատության, արդարության, օրինականության և ավանդաբար բնական-իրավական հիմնախնդիրների շրջանակը կազմող այլ հարցերի հարաբերակցության վերաբերյալ:

Բնական իրավունքի մասին պատկերացումների կայացման ու զարգացման պատմության համակարգային ուսումնասիրումը, նրա հետազոտության մեթոդաբանության մշակումը միայն 19-րդ դարից սկսած են դարձել իրավագետների հատուկ գիտական հետաքրքրության առարկա: Դա կապված էր բնական իրավունքի տեսության ճգնաժամի հետ պայմանավորված պատմական դպրոցի ներկայացուցիչներ Հ. Հուգոյի, Կ. Ֆ. Մավիլյեի, Գ. Պոլիտայի, ինչպես նաև պոզիտիվիստական իրավագիտության քննադատությամբ: Քննադատական վերաբերմունքը, որն այնուհետև փոխվեց բնական-իրավական հիմնահարցերի վերաբերյալ աճող հետաքրքրության, առաջ բերեց պատմական-իրավական բնույթի հետազոտությունների վերելք:

Սույն ատենախոսության մեջ հռոմեական իրավունքի տեսական հիմքերի, միջնադարյան իրավունքի փիլիսոփայության (ներառյալ Թովմա Աքվինացու ուսմունքը) հարցերով օգտագործվել են օտարերկրյա հեղինակների աշխատություններ. Ռ. Ցիպպելիուսի «Իրավունքի փիլիսոփայությունը» (Zippelius R. Rechtsphilosophie. 3 Auflage. Munchen, 1994), Ն. Հոռնի «Իրավագիտության և իրավունքի փիլիսոփայության ներածությունը» (Horn N., Einfurung in die Rechtswissenschaft und Rechtsphilosophie. Weinsberg, 1996), Կ. Ռոհլի «Իրավունքի մասին համընդհանուր ուսմունքը» (Klaus F. Rohl. Allgemeine Rechts. Lehre. Bonne, 1994): Ցանկանում ենք հատուկ առանձնացնել անցյալ դարասկզբի անգլիացի հեղինակներ Ռ. և Ա. Կարլեյլերի «Միջնադարյան քաղաքական տեսության պատմությունը Արևմուտքում» (Carlyle R. W., Carlyle A. J. History of Medieval Political Theory in the West) բազմահատոր հիմնարար աշխատությունը:

Վերջին երկու տասնամյակներում ռուսական իրավագիտությունում սկսեցին լույս տեսնել աշխատություններ նվիրված իրավունքի փիլիսոփայության պատմությանը, նրա առանձին հիմնահարցերին ու նշանավոր դեմքերին: Բնական իրավունքի տեսության մշակումների առանձին հարցեր փիլիսոփայական-պատմական դիրքերից են դիտարկվում Ս. Ս. Ալեքսեևի «Իրավունքի փիլիսոփայություն» (Ս., 1999), «Իրավունք. այբուբեն-տեսություն-փիլիսոփայություն: Համալիր հետազոտության փորձ» (Ս., 1999), «Վերելք դեպի իրավունք: Որոշումներ և որոշումներ» (Ս., 2001), Մ. Բ. Բայտինի «Իրավունքի էությունը» (Մարատով, 2001), Յու. Ա. Բասկինի «Իրավունքի փիլիսոփայության

պատմություն» (Միկտիվկար, 1996), «Պավել Իվանովիչ Նովոգորոդցև» (ՄՊԲ, 1997), «Իրավական և քաղաքական ուսմունքների պատմություն» (ՄՊԲ, 2000), «Քաղաքական-իրավական արժեքներ, պատմություն և արդիականություն» (Ս., 2000), Դ. Ա. Կերիմովի «Իրավունքի մեթոդաբանություն» (Ս., 2000), «Իրավունքի փիլիսոփայության հիմունքները» (Ս., 1992), «Քաղաքական-իրավական հետազոտությունների փիլիսոփայական հիմունքները» (Ս., 1986), «Իրավունքի փիլիսոփայական հիմնախնդիրները» (Ս., 1972), Բ. Յու. Կոզլիխինի «Իրավական պետության գաղափարը: Պատմություն և արդիականություն» (ՄՊԲ, 1993), Գ. Վ. Մալցևի «Իրավունքի ընկալումը: Մտեցումներ և հիմնահարցեր» (Ս., 1999), Վ. Ս. Ներսեյանցի «Իրավունք և օրենք» (Ս., 1983), «Պղատոն» (Ս., 1984), «Իրավունքի փիլիսոփայություն» (Ս., 2008), Վ. Պ. Սալնիկովի «Իրավունքի ռուսական փիլիսոփայություն, հավատի և բարոյականության փիլիսոփայություն» (ՄՊԲ, 1997), «Իրավունքի փիլիսոփայության պատմություն» (ՄՊԲ, 1998), «Իրավունքի ռուսական փիլիսոփայություն» (ՄՊԲ, 1999), Վ. Պ. Սալնիկովի խմբագրությամբ «Իրավունքի փիլիսոփայության դասականներ» մատենաշարը, Վ. Ա. Չետոյրկինայի «Բնական իրավունքի ժամանակակից հայեցակարգերը» (Ս., 1988) և այլոց աշխատություններում:

Հասարակության մեջ անձի իրավական դրության, պետության հետ նրա հարաբերությունների, ազատության և պատասխանատվության հարցերը և այս բոլոր հիմնախնդիրների պատմական-իրավական առումները լայնորեն և հանգամանակից կերպով հետազոտվել են ռուս գիտնականների՝ Ս. Ս. Ալեքսեևի, Լ. Բ. Անտոնովայի, Վ. Գ. Գրաֆսկու, Յու. Բ. Գրեցովի, Վ. Պ. Կազիմիրչուկի, Վ. Ն. Կարաշովի, Դ. Ա. Կերիմովի, Ս. Ա. Կոմարովի, Վ. Ա. Կուրյայովցի, Է. Վ. Կուզնեցովի, Ե. Ա. Լուկաշովայի, Դ. Բ. Լուկովսկոյի, Գ. Վ. Մալցևի, Ն. Բ. Մատուզովի, Վ. Ս. Ներսեյանցի, Ա. Ա. Պիոնտկովսկու, Վ. Բ. Ռուսմանովսկայայի, Ռ. Ա. Ռոմաշովի, Վ. Պ. Սալնիկովի, Լ. Ս. Մալիխի-դոնովայի, Վ. Ա. Տուսնովի, Վ. Ա. Չետվեռնինի, Լ. Ս. Յավլիչի և այլ գիտնականների աշխատություններում:

Այս հեղինակների աշխատություններում պարունակվող տեսական դրույթների և եզրահանգումների զարգացումը ենթադրում է վերադարձ դեպի փիլիսոփայաիրավական դասական ժառանգությունը և նրա վերախմաստավորումը: Ու թեև այսօր էլ չկա հատուկ աշխատություն նվիրված բնական իրավունքի տեսության կայացման ու զարգացման հիմնահարցերին, այդուհանդերձ, դրա իրականացման համար արդի փիլիսոփայաիրավական միտքն արդեն, ստեղծել է բավարար աղբյուրագիտական և մեթոդաբանական հենք:

Հաշվի առնելով թեմայի ուսումնասիրվածության աստիճանը՝ անհրաժեշտ ենք համարում միասնական մենագրության տեսքով իրականացնել բնական իրավունքի տեսության հետ ավանդաբար կապված արդիական

հիմնահարցերի համալիր վերլուծություն՝ հետևելով նրա զարգացման ընթացքում եղած ամեն պատմականին և տրամաբանականին:

Հետազոտության օբյեկտն է բնական իրավունքի տեսությունների (հայեցակարգերի) բազմազանությունը, որպես միասնական-ամբողջական և հարաշարժ սոցիալ-մշակութային երևույթ՝ անտիկ դարաշրջանից մինչև արդի ժամանակաշրջանը:

Հետազոտության առարկան է՝ բնական իրավունքի հայեցակարգի փոխակերպումները և դրանց առանձնահատկությունները արևմտյան եվրոպական իրավաբանական ուսմունքներում՝ պատմական զարգացման տարբեր ժամանակաշրջաններում:

Աշխատության նպատակն է՝ հաշվի առնելով ժամանակակից իրավաբանական գիտության առջև կանգնած խնդիրները իրավական պետության և քաղաքացիական հասարակության կառուցման ընդհանուր-տեսական, հիմնահարցերը, իրավունքի պատմության ու տեսության հենքի վրա համալիր կերպով վերլուծել բնական իրավունքի տեսության զարգացման նախադրյալները, ընթացքը և արդյունքները, նախանշել իրավունքի և պետության, անձի և քաղաքացիական հասարակության մասին ուսմունքի ընդհանուր-տեսական և մեթոդաբանական հիմքերի հետագա զարգացման հիմնական ուղղությունները: Հետազոտության հիմնական նպատակն է նաև պատմական-իրավական ու տեսական-իրավական նոր գիտելիքների ստացման ընթացքում ցույց տալ իրավական ինստիտուտների նշանակությունը անձի և հասարակության վերարտադրման գործում, իրավագիտակցության և իրավական կուլտուրայի դերը մարդու սոցիալական գործունեության մեջ, հիմնավորել իրավական նորմերը, որպես հասարակական հարաբերությունների հրամայականների: Գիտական հետազոտության զարգացման ընթացքում, անշուշտ, դրսևորվում են նրա այնպիսի գծեր, ինչպիսիք են՝ գիտելիքների հարստացումը, ընդլայնումը և ձևափոխումը, այսինքն՝ տեղի է ունենում գիտելիքների աճ, նրանց կուտակում: Ընդ որում, պատմական տեսական մտքի յուրաքանչյուր առանձին խոշոր երևույթը չի վերացնում և չի կլանում ավելի վաղ փիլիսոփայական-իրավական ձևազոյացության նշանակությունը:

Ձևակերպված նպատակը կոնկրետացվում է ստորև ներկայացված կոնկրետ խնդիրների տեսքով.

- բնորոշել իրավունքի փիլիսոփայության պատմության մեջ հիմնարար բնական-իրավական կատեգորիաների մշակման մեթոդաբանական հիմքերը և առանձնահատկությունը,

- բացահայտել բնական իրավունքի մասին պատկերացումների ծագման ընթացքը անտիկ դարաշրջանում, դրա առանձնահատկությունները հռոմեական իրավունքում և միջնադարում,

- վերլուծել բնական-իրավական հիմնահարցերի լուծման ձևերը նոր ժամանակի տարբեր ուղղությունների փիլիսոփայական-իրավական հայեցակարգերում,

- պարզաբանել փիլիսոփայական-իրավական պարադիգմների փոփոխման վեկտորը 18-19-րդ դարերի սահմանագծին և դրանց նշանակությունը իրավական գիտության հիմնարար խնդիրների՝ անձի ազատության, իրավունքի և բարոյականության, սոցիալ-իրավական արժեքների լուծման համար,

- բացահայտել իրավաբանական հիմնական դպրոցների և ուղղությունների բազմազանությունը, հետադասական փիլիսոփայության վերաբերմունքի հիմնական ձևերը՝ բնական իրավունքի տեսության հանդեպ,

- պարզաբանել բնական-իրավական ժառանգության այն արդիական գաղափարները, որոնք հնարավորություն կտան մեթոդաբանորեն ճշգրիտ ձևով դնել, վերլուծել և լուծել այն հիմնախնդիրները, որոնք կապված են քաղաքացիական հասարակության ձևավորման և իրավական պետության կայացման հետ:

Հետազոտության մեթոդաբանական և տեսական հիմունքները.

Իրավունքի փիլիսոփայության կարևորագույն մեթոդն է պատմականի և տրամաբանականի միասնականությունը: Այն կայանում է նրանում, որ իրավունքի կայացման տրամաբանական մոդելը մաքրվում է պատմական պատահական շերտավորումներից: Բնական իրավունքի զարգացման տրամաբանական սխեման կիրառելի է պատմական զանազան իրավիճակների նկատմամբ և կապված չէ պատահական, անցողիկ հանգամանքների հետ: Առանց իրավական զարգացման պատմական վերձանման, բացառվում է նրա օրինաչափությունների տրամաբանական գիտակցման հնարավորությունը ինչպես նաև անհնար է առանց իրավունքի պատմական զարգացման օբյեկտիվ ընթացքի իմաստավորման բացահայտել նրա օրինաչափ շարժման մեխանիզմի ներքին պատճառները:

Ատենախոսության մեջ օգտագործվել են տրամաբանական, համեմատական-իրավական, ինչպես նաև պատմական - իրավական մեթոդները, որոնք հնարավորություն են տալիս պարզել բնական իրավունքի տարբեր հայեցակարգերի առանձնահատկությունները:

Մույն ատենախոսության համար մեթոդաբանական հիմք են հանդիսացել Ս. Ի. Վելիկովսկու, Ա. Յու. Գուրեվիչի, Պ.Ս. Գուրեվիչի, Վ.Ե. Դավիդովիչի, Յու.Ա. Ժդունովի, Բ.Ս. Երասովի, Յու.Ս. Լոտմանի, Բ. Մալինովսկու, Ա. Մոլի, Վ.Ն. Ռոմանովի, Ա.Ս. Սիլիչերի, Ռ.Ջ. Գոլլինգվուդի, Լ. Ուայթի, Դ.Բիդնի, Յու. Սոյուարդի, Է.Ա. Օրլովայի, Ռ. Լոուի, Տ. Կունի, Ս. Ս. Տուլմինի, Պ. Ֆետեյարենդի, Մ.Պլանի, Մ.Է. Կրասիվենսկու, Ե.Ա. Մամչուրի, Վ.Պ. Պլոսինի, Ս.Ա. Գլաշնևայի, Ս.Ա. Մամոնովայի, Ի.Պ. Մալինովայի, Օ. Խեֆֆերի, Լ.Ս. Յա-

վիչի և այլոց աշխատությունները:

Ստենախոսական աշխատանքի համար որպես տեսական-աղբյուրագիտական հենք են հանդիսացել Բ.Ն. Չիչերինի, Վ.Ս. Ներսեսյանցի, Վ.Գ. Գրաֆսկու, Օ.Է. Լեյստի, Ի.Բ. Ցարկովի, Լ.Վ. Բայտինի, Վ.Ա. Չետվերնինի, Վ.Ա. Տումանովի, Ե.Ա.Լուկաշևսկի, Գ. Բերմանի և այլոց աշխատությունները:

Աշխատության գիտական նորույթն այն է, որ հայրենական իրավագիտության մեջ հեղինակը, մենագրության մակարդակով և պատմատեսական վերլուծության եղանակով, ներկայացվում է բնական իրավունքի տեսության պատմական զարգացման հետ կապված ամբողջական և համակողմանի գիտական հետազոտություն:

Գիտարկվող հիմնահարցերի վերաբերյալ համալիր մոտեցումը հնարավորություն է տալիս տեսական-իրավական հետազոտության մեջ ներառել բնական իրավունքի տեսությամբ միավորված առանձին հրատապ հիմնախնդիրներ, պարզել դրանց պատմական ու տրամաբանական հիմքերը, բացահայտել բնական իրավունքի տարբեր դպրոցների գաղափարների փոխներգործակցությունը և փոխկապվածությունը:

Տվյալ հարցադրումների լույսի ներքո, ատենախոսության մեջ իրականացվել է իրավական ուսմունքների համակարգում բնական իրավունքի հասկացությունների առանձնացման համար անհրաժեշտ հիմքերի ընդհանրացնող վերլուծություն:

Ելնելով պատմական վերլուծության արդյունքներից՝ ատենախոսության մեջ իրականացվում է բնական իրավական կատեգորիաների համակարգում, ինչպես նաև բնական-իրավական կարևորագույն հասկացությունների տեղի և դերի մասին միասնական պատկերացումների վերաբերյալ հեղինակային մշակում: Իրավունքի փիլիսոփայության համաշխարհային դասականների աշխատությունների վերլուծության և արդի իրավագիտության դիրքերից մշակվում է բնական իրավունքի տեսությունների (հայեցակարգերի) ծագման, կայացման և զարգացման հիմնական պատմական ուղանիշները՝ հիմնված փիլիսոփայական-իրավական ուսմունքների պարադիգմների վերաիմաստավորման և համակողմանի վերլուծության արդյունքների հիման վրա:

Պաշտպանության ներկայացվող հիմնական դրույթներն են՝

1. Հաշվի առնելով բնական իրավունքի տարբեր հայեցակարգերի ձևավորման և զարգացման համաշխարհային պատմական փորձը՝ առաջարկվում է պետության և իրավունքի մասին գիտության մեջ վիճարարվող հարցերի լուծման հեղինակային ուրույն մոտեցում, որը վերաբերում է այնպիսի հիմնախնդիրներին, ինչպիսիք են՝ իրավաօրինականությունը և արդարությունը, ազատությունը և զսպվածությունը, իրավունքը և հավասարությունը, ժամանակակից բազմամշակութային և տեղեկատվական հասարակության

պայմաններում՝ անձի իրավունքների և ազատությունների ապահովման հիմնախնդիրները:

2. Էմպիրիկ ուղղության իրավունքի փիլիսոփայության կողմից մշակվող բնական իրավունքի հիմնախնդիրների շրջանակն ընդգրկում էր բնական իրավունքի և մարդու բնական վիճակի ոլորտի հարցերը: Ընդ որում, բուն բնական իրավունքը մեկնաբանվում էր ոչ թե որպես իրականորեն գոյություն ունեցող, ի սկզբանե արված մետաֆիզիկական իրողություն, ինչպես Թոմաս Աքվինացու մոտ, այլ որպես մարդկային անձի վարքագծի որոշակի ձև: Մարդկության բնական վիճակում մարմնավորված բնական իրավունքը՝ իրավունքի էմպիրիկ փիլիսոփայության համակարգում նշանակություն ունի որպես պետության ստեղծման, պոզիտիվ իրավունքի մշակման համար նշանակություն ունեցող յուրատեսակ ազդակ և խթան: Բնական իրավունքի նման ձևափոխումը, մասնավորապես Լոկի կողմից, իր հետագա լուծումը գտավ Ի. Կանտի տրանսցենդենտալ փիլիսոփայության մեջ, պոզիտիվ իրավունքի աղբյուրը Կանտը տեղափոխեց բնական իրավունքի մետաֆիզիկական կացությունից գործնական ունակության ոլորտ, դրանով իսկ ճանապարհ հարթեց բնական իրավունքի և պոզիտիվ իրավունքի հարաբերակցության և դրանց հետագա ներդաշնակ գոյակցության, փոխլրացման և համահարթեցման միտումով, որը տեսնում ենք ժամանակակից եվրոպական սահմանադրական դոկտրինայում ու պրակտիկայում:

3. 17-18-րդ դարերի համարյա բոլոր նշանավոր մտածողները ընդգծում էին անձի ազատության որոշիչ նշանակությունը բնական իրավունքի հիմքերի սահմանադրման գործում: Այդուհանդերձ, նրանք տարբեր ձևով էին լուծում այդ օրենքի բնական-իրավական մեկնաբանության հետ կապված հիմնահարցերը: Իրավունքի փիլիսոփայության ռացիոնալիստական ուղղության ներկայացուցիչները (Գրոցիոսը, Մոնտեսքյուն և այլք) մեկնաբանում էին բնական իրավունքը որպես մարդկային բանականության համար նախատվյալ մետաֆիզիկական բացարձակ սուբստանցի յուրատեսակ ճառագայթում: Ընդհանուր առմամբ այդ մոտեցումը համապատասխանում էր այդ դարաշրջանի մետաֆիզիկական մտածողությանը: Բնական իրավունքի սկզբունքները դիտվում էին դրանց զարգացման գաղափարից դուրս, հասկացվում էին ոչ ոգեղեն, սուբյեկտի հետ կապի հիմնախնդրից գատ: Իրավունքի փիլիսոփայության էմպիրիկ թևի ներկայացուցիչները (Լոկ, Հոբս) դիտում էին բնական իրավունքը որպես գործնական հրահանգ՝ պետության և պոզիտիվ իրավունքի կառուցման համար, որոնք վեր էին բարձրանում բնական իրավունքի մակարդակից: Բնական իրավական գաղափարների մեկնաբանման մեխանիզմը և նատուրալիզմը այստեղ հիմնական խոչընդոտը հանդիսացան դրանց իրական զարգացման համար:

հենց դեպի բնական իրավունքի մոդելի հայեցակարգային իմաստը:

9. Ատենախոսության մեջ հիմնավորվում է այն տեսակետը, ըստ որի արդի իրավունքի փիլիսոփայության տեսական մակարդակը, մեր կարծիքով, զգալի չափով պայմանավորված է անանց իրավափիլիսոփայական կայուն ավանդույթներով, հատկապես՝ պետական իշխանության սահմանափակման իրավական ձևերի, անձի իրավունքների և անվտանգության ապահովման հիմնախնդիրների, ինչպես նաև բարոյաիրավական այլ իդեալների հետարավորին իրականացման հետ կապված հիմնախնդիրներով:

10. Մեր կարծիքով, բնական իրավունքը, տեսական պատկերացումների բազմազանությամբ հանդերձ, իրենից ներկայացնում է վերպետական սոցիալ-իրավական ինստիտուտ, որն արտահայտում է իրավունքի իդեալական, բնական, բանական և սոցիալական ասպեկտները, ինչպես նաև կատարում է պոզիտիվ իրավունքի նորմերի գնահատման և արժևորման գործառույթ, կամ էլ՝ անմիջականորեն դրսևորվում է գործող իրավունքի դրույթներում:

Հետազոտության գիտական նշանակությունը. Հետազոտության արդյունքները ներկայացնում են որոշակի գիտահետազոտական արդյունք, որը հետագայում կարող է օգտագործվել իրավական պետությունում՝ անձի իրավունքների և ազատությունների ապահովման, դրանց իրականացման կառուցակարգերի հետագա կատարելագործման ուղղությամբ: Ատենախոսության եզրակացությունները կարելի է օգտագործել նաև իրավունքի և պետության պատմության ու տեսության, իրավական ու քաղաքական ուսմունքների պատմության, իրավունքի փիլիսոփայության առարկաների ուսումնասիրության ժամանակ:

Հետազոտության արդյունքների փորձարկումը: Սույն ատենախոսական աշխատանքն իրականացվել է ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի պետաիրավական հետազոտությունների բաժնում, որտեղ կայացվել է աշխատանքի քննարկումը և գրախոսությունը:

Ատենախոսության հիմնական դրույթներն սրտահայտվել են հեղինակի մի շարք գիտական հոդվածներում:

Աշխատանքի կառուցվածքը և բովանդակությունը. Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլխից, 6 ենթագլխից, ամփոփումից և օգտագործված գրականության ցանկից:

Ներածությունում հիմնավորվում է թեմայի ընտրությունը և դրա հետազոտության արդիականությունը, աշխատանքի նպատակն ու խնդիրները, գիտական նորույթը, տեսական և կիրառական նշանակությունը, ձևակերպված են պաշտպանության ներկայացվող հիմնական դրույթները, աշխատանքի դիտական և գործնական նշանակությունը:

Աշխատանքի առաջին գլխում՝ «Բնական իրավունքի տեսության բազ-

մագանությունը, պատմական տիպերը: Անտիկ դարաշրջանի բնաիրավական հայացքների առանձնահատկությունները» վերտառությամբ հեղինակը հանգամանորեն վերլուծության է ենթարկում բնական իրավունքի տեսության բազմագանությունը և հիմնական պատմական տիպի առանձնահատկությունները:

Բնական իրավունքի տեսությունն ամենահին և ամենատարածվածն է, որն սաչքի է ընկնում իր բազմազանությամբ և կենսունակությամբ⁷: Բնական իրավունքի տեսության հիմքում (իր բազմազանությամբ հանդերձ) ընկած է այն գաղափարը, համաձայն որի գոյություն ունեցող իրավական նորմերը (պոզիտիվ իրավունքը) պետք է համապատասխանեն մարդու կամքից անկախ ինչ-որ օբյեկտիվ, էլակետային սկիզբներին՝ բնությանը, բանականությանը: Բնական իրավունքի տեսությունը անխզելիորեն կապված է իդեալական աշխարհայեցողության և, մասնավորապես՝ իդեալական իրավամտաճողության հետ:

Տարբեր բնական-իրավական հայեցակարգերի հեղինակները տարբեր ձևով են մեկնաբանում բնական իրավունքի էությունը և բովանդակությունը: Ընդ որում, որպես բնական իրավունք մեկնաբանվում են այնպիսի տարբեր իրավական երևույթները, ինչպիսիք են՝ բոլոր մարդկանց բնական հավասարությունը և ազատությունը, իրավունքի գերակայությունը, մարդու բնական և անօտարելի իրավունքները և այլն:

Սակայն բնական իրավունքի տարբեր հայեցակարգերին ու ուղղություններին բնութագրական է նրանց ընդհանուր մոտեցումը բնական իրավունքի հասկացության վերաբերյալ, որն արտահայտվում է հետևյալում. որպես մարդկային պրակտիկայի վերապոզիտիվ իրավունքների և պարտականությունների հանրագումար:

Այստեղից կարելի է եզրակացնել, որ բնաիրավական հայեցակարգի (հայեցակարգերի) էությունը իդեալական իրավունքի և գործող (պոզիտիվ) իրավունքի տարբերակման և դրանց հարադրման մեջ է: Իսկ դա նշանակում է, որ բնական իրավունքը ներկայանում է գոյաբանական և արժեքանական առումներով:

Գոյաբանական առումով բնական իրավունքի տեսությունը փորձում է պատասխանել հետևյալ հարցին՝ «ի՞նչ է իրավունքը»: Այս հարադրության վրա իրավունքի էությունը բացահայտվում է «արդարություն» հասկացության միջոցով, իսկ բնական իրավունքի տեսությունը փորձում է բացատրել իրավունքի իսկական իմաստը, նրա առաքելությունը և նշանակությունը սոցիալ-իրավական հարաբերություններում:

⁷ См. и Четвернин В.А. Современные концепции естественного права. Отв. ред. проф. В.А. Туманов. М., 1988.

Արժեքանական առումով բնական իրավունքի տեսությունը գնահատում, կարևորում է գործող (պոզիտիվ) իրավունքը՝ ելնելով իրավունքի էության պատկերացումներից: Այլ խոսքով, բնական իրավունքի հայեցակարգը իրականացնում է քննադատական գործառույթ: Բնական իրավունքի տեսության այդ երկու առումները միահյուսվում են մեկ ամբողջական ու միասնականության մեջ, քանի որ ռենն մեկ հիմնական նպատակ՝ բացահայտել արդարությունը, որպես իրավունքի էության և պոզիտիվ օրենքի գնահատման չափանիշ:

Հետևաբար, կարելի է ենթադրել, որ բնական իրավունքի տեսության էությունը իրավունքի և պետության փիլիսոփայական իմաստավորման և բարոյական քննադատության մեջ է: Այդ քննադատությունն ուղղված է իրավունքի և պետության կատարելագործմանը, ինչպես նաև արդարության և ազատության պահանջներին համապատասխան հասարակական կյանքի բնականոն գործառնության ապահովմանը:

Բնական իրավունքի տեսության երկու առումներն (տարբերակման և գնահատման) ուղղված են նաև օրինականացնել ու սահմանափակել պետական իշխանությունը: Այս իմաստով՝ բնական իրավունքի տեսությունը ձեռք է բերում առանձնահատուկ սոցիալական նշանակություն, հատկապես՝ փոխակերպվող հասարակարգերի համար, որոնցում դեռևս ձևավորված չեն կայուն սոցիալական, քաղաքական, իրավական արժեքանակարգեր:

Մեր կարծիքով, թե՛ «դասական» և թե՛ «ժամանակակից» (ոչ դասական) բնական իրավունքի հայեցակարգերը ըստ ձևի լինելով տարբեր, բովանդակությամբ և էությամբ շատ ընդհանրություններ ունեն, որոնք, կապված են մարդու իրավունքների, պետական իշխանության իրավական կազմակերպման, իրավունքի և պետական ինստիտուտների հումանիզացիայի հետ:

Աշխատանքի երկրորդ գլխում, «Բնական իրավունքի հայեցակարգը միջնադարյան աստվածաբանական-փիլիսոփայական և իրավաբանական ուսմունքներում» վերնագրով, հեղինակը լայնորեն ներկայացնում է բնական իրավունքի հայեցակարգերի բովանդակությունը և առանձնահատկությունները՝ միջնադարյան իրավաբանական ուսմունքներում:

Անտիկ դարաշրջանի վերջում՝ Հռոմեական Կայսրության անկման ժամանակաշրջանում, աստիճանաբար, ձևավորվում է միջնադարյան իրավաբանական միտքը: Քանի որ միջնադարյան արևմտաեվրոպական իրավաբանական մտքի ձևավորումը և զարգացումը կապված է քրիստոնեության և նրա վարդապետության հետ, ուստի միջնադարյան իրավաբանական միտքը կազմում է միջնադարյան աստվածաբանական-փիլիսոփայական ուսմունքի բաղկացուցիչ մասը:

Իբրև կրոնական փիլիսոփայություն, որը ներառում էր նաև

իրավաբանական միտքը, միջնադարյան փիլիսոփայությունը աստվածակենտրոն էր: Եթե անտիկ փիլիսոփայությունը և, համապատասխանաբար՝ իրավաբանական միտքը տիեզերակենտրոն էր, որովհետև բացարձակ կեցություն էր դիտվում տիեզերքը, ապա միջնադարյան իրավափիլիսոփայությունը աստվածակենտրոն էր, իբրև բացարձակ կենտրոն հանդես է գալիս Աստված: Այլ խոսքով, եթե անտիկ փիլիսոփայությունը լայն իմաստով ռացիոնալիստական բնույթ ուներ, այսինքն՝ իմացության գլխավոր աղբյուրը բանականությունն էր, իսկ իմացության բարձրագույն աստիճանը՝ բանական ճանաչողությունը, ապա միջնադարում հավատը իմացաբանական առումով բարձր է դասվում բանական ճանաչողությունից, բանականության և գիտության նկատմամբ հաստատվում է հավատի և աստվածաբանության գերազանցության և առավելության սկզբունքը:

Քրիստոնեական փիլիսոփայության ձևավորման և զարգացման գործում կարևոր նշանակություն ունեցավ Արևմտյան եկեղեցու ուսուցիչ Օգոստինոս Երանելու փիլիսոփայական-աստվածաբանական վարդապետությունը: Ողջ միջնադարի ընթացքում Օգոստինոսը ընդունվում էր որպես անառարկելի հեղինակություն, որպես աստվածաբան փիլիսոփայի տիպար: 13-րդ դարում Թոմաս Աքվինացու հանդես գալուց հետո, հատկապես կաթոլիկ եկեղեցու կողմից թույլվել պաշտոնական փիլիսոփայություն ընդունելուց հետո, Օգոստինոսի հեղինակությունը փոքր-ինչ նվազում է, սակայն հետագայում, Ռեֆորմացիայի շրջանում, օգոստինոսական ավանդույթները կրկին վերածնվում են:

Նրա փիլիսոփայական հայացքները շարադրված են «Խոստովանություն», «Երկնային քաղաքի մասին», «Կամքի ազատության մասին», «Մենախոսություններ» և այլ երկերում: Օգոստինոսի փիլիսոփայական-աստվածաբանական հայացքների ձևավորման վրա ազդեցություն է ունեցել մանիքեականների, սկեպտիկների (որոնց դեմ նա գրել է հատուկ աշխատություններ) և, հատկապես, նորալատոնականների փիլիսոփայությունը: Սակայն նորալատոնական փիլիսոփայությունը, որը մի շարք առումներով սկզբունքորեն տարբերվում է քրիստոնեությունից, նա վերաիմաստավորում է քրիստոնեության ոգով:

Օգոստինոսի, «երկու քաղաքի» մասին ուսմունքում նկատելի է անտիկ քաղաքական հայեցակարգերի ազդեցությունը, պլատոնյան՝ պետական կառույցի ճիշտ (իդեալական) և խեղաթյուրված (գոյություն ունեցող) ձևերի ու ստոյիկյան՝ երկու պոլիսների (պետությունների) մասին:

Երկրային աշխարհի անցողիկ կարգին Օգոստինոսը հակադրում է հավերժական աստվածային կարգը և դրա երկրային կերպարը՝ ճշմարիտ քրիստոնյաների, «ընտրյալների» համայնքը («թափառաշրջիկ եկեղեցին»): Երկրային պետական կարգը գոյատևելու է մինչև Քրիստոսի երկրորդ գա-

լուստը, երբ կհաստատվի «երկնային թագավորությունը»: Բայց այժմ «երկնային քաղաքը» հրավիրում է քաղաքացիներ բոլոր ժողովուրդներից և հավաքաբար թափառող հասարակություն բոլոր լեզուներով՝ նշանակություն չտալով բարբերում, օրենքներում և հաստատություններում եղած տարբերությանը, որոնցով հաստատվում կամ պահպանվում է երկրային աշխարհը՝ վերջինից ոչինչ չփոխելով և չավերելով, այլ հակառակը՝ պահպանելով այն ամենը, ինչ թեև տարբեր է ժողովուրդների մոտ, բայց միաված է երկրային կյանքի միենույն նպատակին:

Իշխանության և պետության առաջացումը նա մեկնաբանում է պայմանագրային տեսության ոգով: Իշխանության ենթարկումը համաձայնության հիման վրա ենթադրում է քաղաքական ազատության առկայություն: Իշխանական հարաբերությունների ձևավորումը նա կապում է սոցիալական ծագման հետ:

Օգոստինոսի համաձայն՝ գոյություն ունեն մարդկային համակեցության տարբեր ձևեր, ընտանիք, պետություն, մարդկային հասարակություն և մարդկանց ու աստվածների համակողմանի ընդհանրության, որոնք բնական են՝ ի վերուստ նախասահմանված: Քանզի մարդկանց՝ նախահաստատված կարգին հնազանդ բնությունը բնականորեն նրանց մղում է միավորվել այդ կարգի շրջանակներում: Դա անհրաժեշտ է համամարդկային խաղաղության հաստատման և մարդկանց ու ընդհանրության նշված ձևերի անվտանգության ապահովման համար:

Մարդկային ընդհանրության ցանկացած ձև պետք է հիմնվի իրավունքի՝ որպես արդարության մարմնավորման վրա: Իսկ իսկական (ճշմարիտ) արդարությունը Աստված է, աստվածային օրենքը: Ելնելով դրանից՝ Օգոստինոսը բռնակալ է անվանում ոչ միայն անարդար կառավարչին, այլև անարդար ժողովրդին: Իսկ այն պետությունը, որտեղ խեղաթյուրվում և խախտվում է իրավունքը՝ արդարության մարմնացումը, ենթակա է կործանման: Եթե պետության մեջ ապահովվում է արդարությունը և հարգանքը կրոնի (քրիստոնեության) նկատմամբ, ապա կառավարման, պետական կառույցի բոլոր ձևերը համարվում են ընդունելի:

Միջնադարյան աստվածաբանության և սրբաբանական խոշորագույն ներկայացուցիչ Թոմաս Աքվինացին (1225-1274) մշակեց ուրույն իրավաբանական տեսություն, որի հիմնադրություններից էր բնական իրավունքը և վերջինիս շուրջ ձևավորվեց մտածողների մի ամբողջ դպրոց: Թոմաս Աքվինացին միջնադարի խոշորագույն աստվածաբան-փիլիսոփաներից մեկն է, որի տրամաբանական համակարգը ապշեցնում է իր հասակությամբ և փոխկապվածությամբ: Նրա իրավափիլիսոփայական ուսմունքն ավելի հակված էր դեպի արիստոտելականը, քան՝ պլատոնաօգոստինոսական վարդապետությունը:

Աքվինացու փիլիսոփայության, պետության և իրավունքի հիմնադրույթն է արաբազգործության գաղափարը: Նա ստեղծում է իրավունքի բազմաստիճան համակարգ՝ համադրելով ու համակարգելով հռոմեական իրավունքը, այլ ժողովուրդների իրավական գիտելիքները և եկեղեցու հայրերի հայացքները:

Աշխատանքի երրորդ գլխում՝ «Բնական իրավունքի հայեցակարգի մեկնաբանությունները՝ ռացիոնալիստական և ժամանակակից իրավաբանական ուսմունքների համակարգերում» վերտառությամբ, հեղինակը հանգամանորեն քննական վերլուծության է ենթարկում բնական իրավունքի հայեցակարգերը՝ Լուսավորության ժամանակաշրջանի ռացիոնալիստական մտածողության համակարգերում:

Նոր ժամանակների իրավագիտությունը սկսել է ձևավորվել եվրոպական Վերածննդի և Ռեֆորմացիայի դարաշրջանում: Այն կողմնորոշված էր դեպի նոր՝ հակաավատատիրական, հակամիառեծան կարգերը, որոնց հիմքում ընկած էին բնական իրավունքի և հասարակական դաշինքի ռացիոնալիստական հայեցակարգերի, մարդու բնական և անօտարելի իրավունքները, բոլոր մարդկանց իրավական հավասարության և ազատության գաղափարները:

Բնական իրավունքի հայեցակարգի զարգացումը կապված է այնպիսի մտածողների հետ, ինչպիսիք են՝ Ն. Մաքիավելին, Ժ. Բոդենը, Հ. Գրոցիուսը, Բ. Սպինոզան, Ֆ. Բեկոնը, Թ. Հոբսը, Ջ. Լոկը, Մ. Պուֆենդորֆը, Հ. Թոմազիան, Հ. Վոլֆը, Հ. Լեյբնիցը, Ծ. Լ. Մոնտեսքյուն, Ժ. Ժ. Ռուսոն, Թ. Ջեֆերսոնը, Ջ. Ադամը, Դ. Մեդիսոնը, Է. Կանտը, Ֆ. Հեգելը և այլք:

Առենախոսության հիմնական եզրահանգումներն են՝

1. Գիտության պատմական զարգացման ընթացքում իրավունքի և պետության մասին ուսմունքների, ինչպես նաև գոյի բնական, թե աստվածային կարգից կամ էլ մարդու բնական հատկանիշներից բխող էթիկական ուսմունքների համակարգում բնական իրավունքը հանդես է գալիս որպես հիմնական և ելակետային հասկացություն: Բնական իրավունքի տեսության պատմական գործառույթը, դարաշրջանի ոգուն համապատասխան, իրավական իդեալներ արտահայտելն էր: Մեր կարծիքով, բնական իրավունքի բուն բնագավառը, ի տարբերություն դրական իրավունքի բնագավառի, ճշմարտության, արդարության պահանջների բնագավառն է, ընդհանուր իդեալական իրավական նորմերի համակարգն է, որը բխում է մարդկային բանականությունից և պետք է պարտադիր չափանիշ և ուղեցույց ծառայի դրական իրավունքի համար:

2. Իրավական իդեալը պատշաճն է, և այդ իմաստով իրավունքն իրենից ներկայացնում է հասարակությունը կառավարելու հոգևոր-գործնական ձև: Իրավունքի էության իրապես խոր ճանաչումը անհնար է միայն պոզիտիվ իրավաբանական գիտության սահմաններում: Այդ իսկ պատճառով բնական իրավունքի մասին պատկերացումների պատմական զարգացման հետագո-

տությունը հնարավորություն է տալիս ավելի ակններն դարձնել իրավունքի և սոցիալական էվոլյուցիայի միասնականությունը, գիտակցել արդի ժամանակաշրջանում զարգացող իրավական նորմերի, իրավական իդեալների, իրավական ինստիտուտների ձևավորման նախադրյալները:

Այս բոլոր հարցերը կենտրոնանում են բնական իրավունքի հիմնական հայեցակարգերի էլակետային հիմնախնդիրներում, մարդու ազատության և բնության մեջ ու սոցիումում նրա գոյության զուգորդման հիմնախնդրում, անհատի իրավաչափ վարքի կարգավորման գործում բարոյական նորմերի և իրավական օրենքի փոխգործողության հիմնախնդրում, հասարակության իրավական կուլտուրայի բնույթը բնորոշող բարոյական-իրավական իդեալների էության հիմնախնդրում և այլն: Հենց բնական իրավունքի մասին ուսմունքի սահմաններում է ջանում իրավաբանական գիտությունը գտնել իրավունքի ու օրենքի հարաբերակցության հարցի պատասխանը, հասկանալ, որ իրավական սկզբունքներն ու նորմերը փաստացի հասարակական հարաբերությունների հատուկ ձև են՝ ունիֆիկացված ձև, որում գոյություն ունի ներքին տրամաբանություն որպես կոնկրետ իրահարաբերությունների ներդաշնակության արտահայտություն:

3. Բնական իրավունքի տեսության զարգացման պատմական իրավական հետազոտության ընթացքում առաջանում է որոշակի բարդություն՝ կապված այն բանի հետ, որ պատմական տարբեր դարաշրջաններում այս հասկացության մեջ ներդրվում էր միանգամայն տարբեր իմաստ: Դրա հետ մեկտեղ պետք է հաշվի առնել, որ «բնական» հասկացության էվոլյուցիան կապված է էվոլյուցիոն «natura»-ն բնության հասկացության զարգացման հետ: Հին հույների և հռոմեական իրավաբանների մոտ հստակորեն ձևավորված իրավաբանական այս հասկացության իմաստը զգալիորեն լողզվում է միջնադարում: Նոր ժամանակների մտածողների մոտ այն նորեն ձեռք է բերում կոնկրետություն և կատեգորիալ հստակություն: Լուսավորության դարաշրջանում կատարվում է փիլիսոփայաիրավական պարադիգմների փոփոխություն ազատության հասկացության, հայեցակարգային բովանդակության պարունակության հետ կապված, այդ հասկացությունը ձևափոխվում է իրավական կատեգորիաների դեդուկցիայի էլակետի: Մասնավորապես, Գերմանական դասական և էտդասական փիլիսոփայական համակարգերում ձևավորվում է «բնական իրավունքի» իրավափիլիսոփայական հայեցակարգը:

4. Ելնելով պատմական վերլուծության արդյունքներից՝ առենախտության մեջ իրականացվում է իրավական կատեգորիաների համակարգում բնական-իրավական կարևորագույն հասկացությունների տեղի և դերի մասին միասնական պատկերացումների մշակում: Իրավունքի փիլիսոփայության գերմանական դասականների աշխատությունների ծավալուն համակարգի

ուսումնասիրության հիման վրա մշակվում է բնական իրավունքի տեսության ծագման, կայացման և զարգացման հեղինակային հայեցակարգ՝ հիմնված փիլիսոփայական-իրավական պարադիգմների նորացման և իրավական կատեգորիաների գիտական վերլուծության գերակայությունների համապատասխան փոփոխության մասին պատկերացումների վրա:

5. Լուսավորության դարաշրջանի դասականները բացառիկ աշխատանք կատարեցին ռացիոնալիստական հիմնավորելու համար նախ իրավաբանական և էթիկական գիտությունների ընդհանուր համակարգերում բնական իրավունքի մասին ուսմունքի անհրաժեշտությունը, և երկրորդ՝ տվյալ հիմնահարցերի շրջանակներում համաշխարհային քաղաքական-իրավական գանձարանը մտած հասարակական պայմանագրի տեսության, անձի բնական իրավունքների զաղափարի, իրավական պետության ու քաղաքացիական հասարակության հայեցակարգերի մշակման առումով: Մակայն այն ժամանակվա գիտության ընդհանուր-մեխանիցիստական հրահանգավորումների հետ կապված՝ ճանաչման մեթոդի թերությունները էականորեն սահմանափակեցին ճանաչման հնարավորությունները: Այս ամենի արդյունքում բնական իրավունքի բուն բովանդակությունը մնաց չափազանց վերացական, այն փոխարինվում էր ընդհանուր բարոյախրատական դատողություններով, որոնք շատ հաճախ զուրկ էին ներքին կապից (ռացիոնալիստական ուղղվածության իրավունքի փիլիսոփաների մոտ), կամ էլ կորչում էին մասնավոր եզրահանգումների և ընդհանրացումների ծովում (Էմպիրիզմի ներկայացուցիչների մոտ):

6. Արդի դարաշրջանին բնորոշ «վերածնված բնական իրավունքի» հայեցակարգի համաձայն անձի ազատության զաղափարը զարգացվում է մինչև բացարձակ ինքնավարության սկզբունքի և, որպես այդպիսին, դառնում է դեդուկցիայի էլակետ բարոյաիրավական հիմնական կատեգորիաների համար, որոնք այսուհետ միաժամանակ հանդես են գալիս և՛ որպես իրավունքի տեսության կանխադրյալներ, և՛ որպես անձի հանդեպ գործնական վերաբերմունքի հրամայականներ:

7. Բնական իրավունքը հավերժ և անփոփոխ, գոյատևում է անկախ մարդկության զարգացումից, որի իրավունքը (պոզիտիվ իրավունք) կարող է համընկնել կամ չհամընկնել նրա հետ, համապատասխանել նրան, կամ չհամապատասխանել: Բնական իրավունքը ներկայացնում է բացարձակ («աբսոլյուտ») մասշտաբ, իրավունքի օրինակելի տիպար: Նրա մեջ է պարունակվում այն, ինչն անվանում են իրավունքի հավերժ արժեքներ: Այս բնագավառին են պատկանում մարդու բնածին և անօտարելի, անքակտելի իրավունքները, որոնք իրենց պոզիտիվ ամրագրումն են ստացել բազմաթիվ պետությունների սահմանադրություններում, այդ թվում ՀՀ Մահմանադրության

համապատասխան հոդվածներում:

8. Անփոփելով նշենք, որ բնական իրավունքի տեսության ընդհանրական-արժեքային հատկանիշներն են՝

ա) դա հեղափոխական, առաջադիմական դոկտրին է, որի դրոշի ներքո տեղի են ունեցել բուրժուադեմոկրատական հեղափոխություններ, որոնք փոխարինելու են եկել հնացած ֆեոդալական հարաբերություններին՝ նոր առավել ազատ դասակարգով,

բ) դրանում ճշմարտացի նշված է՝ օրենքները կարող են լինել ոչ իրավական, դրանք պետք է համապատասխանեցվեն իրավունքի հետ, այսինքն՝ բարոյական արժեքների, ինչպիսին են՝ արդարացիությունը, ազատությունը, հավասարությունը և այլն,

գ) այն որպես մարդու իրավունքների աղբյուր է հռչակում մարդու խառնվածքը կամ Աստծուն, դրանով հանդերձ տեսական հիմք է «դրոշմուն» պետական ծառայողների և պետական կառուցվածքի կամայականություններին: Բնական իրավունքի տեսության խոցելի կամ թույլ կողմերն են՝

ա) «իրավունք» հասկացության այդպիսի ընկալումը (որպես վերացական բարոյական արժեքի), «նվազեցնում է», դրա ձևա-իրավաբանական հատկանիշները, ինչի արդյունքում ողողվում են օրինականի և հակաօրինականի չափանիշները, քանի որ դա հեշտ չէ որոշել արդարացիության դիրքորոշումից, որի մասին պատկերացումները կարող են տարբեր լինել յուրաքանչյուրի մոտ,

բ) նմանատիպ մեկնաբանումը կապված է ոչ այնքան իրավունքի, որքան իրավունքի գաղափարախոսության և իրավունքի հոգեբանության հետ, որոնք բնականաբար տարբերվում են իրավաբանական սուբյեկտների մոտ:

Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլվել են հեղինակի հետևյալ հրապարակումներում.

1. Բնական իրավունքի գաղափարների պատմական զարգացման հիմնական ուղենիշները.- «Օրինականություն» №53, 2009, էջ 51-55:

2. Բնական իրավունքի տեսության տրանսֆորմացիան ժամանակակից իրավաբանական ուսմունքներում.- «Օրինականություն» №54, 2009, էջ 51-54:

3. Բնական - իրավական ավանդույթները իրավունքի կանոնային փիլիսոփայության մեջ. - «Օրենք և իրականություն», №7, հուլիս, 2009, էջ 21-27:

4. Բնական իրավունքի գաղափարները հեգելյան փիլիսոփայության համակարգում.- «Օրենք և իրականություն», №8, օգոստոս, 2009, էջ 15-17:

Хачатрян Артем Гагикович

Формирование и развитие представлений естественного права в западноевропейских правовых учениях (историко-теоретический анализ)

Диссертация на соискание ученой степени кандидата юридических наук по специальности 12.00.01-«Теория и история государства и права, история правовых учений». Защита состоится 28 июня 2011г. в 16:30 час на заседании специализированного совета 041 ВАК при Академии государственного управления РА (по адресу: 0028, Ереван, Киевяна 8).

РЕЗЮМЕ

Данное диссертационное исследование посвящено историко-теоретическим проблемам концепции естественного права. Выбор темы диссертации прежде всего обусловлен теоретической и практической актуальностью проблематики. Исследование в области естественного права всегда были достоянием правового и философского знания с первых веков его формирования в эпоху Античности и вплоть до постклассических концепций XIX-XXI веков. Естественное право выступило в ходе исторического развития науки, как основное понятие в системе учений о государстве и праве, а также этических учений, которые исходили из природного или божественного порядка бытия или из естественных свойств человека. Историческая функция теории естественного права состояла в выражении соответствующих духу эпохи правовых идеалов.

Несмотря на разнообразие концепции и некоторые противоречивости доктрины естественного права, как она выступала исторически и в эпоху Античности, и в Средние века, и в Новое время, несмотря на те, кажущиеся сегодня почти неразрешимыми проблемы, которые вскрыла в ней современная правовая и философско-правовая мысль, все ценности естественного права, опирающиеся на принципе абсолютности, не зависят от изменений социально-исторических условий и не подлежат девальвации. Они не являются продуктом государственной воли и стоят выше его сиюминутных интересов и нужд. Поэтому они способны выступать в роли ценностных критериев правотворческой деятельности государственных органов в разные исторические периоды.

Объектом данного диссертационного исследования является содержание идей исторического развития концепций естественного права, представленных в учениях о праве и государстве в трудах мыслителей прошлого и настоящего, которые анализируются, как в рамках исторического развития правовых учений, так и с учетом политико-правовых проблем современности.

Целью исследования является учет задач актуально-правовом науки, на основе общетеоретических идей построения правового и социального государства, теории и истории права, комплексно проанализировать предпосылки, процесс и результаты развитие концепции естественного права, определить основные

направление дальнейшей разработки общетеоретических основ учения о праве и государстве.

Данное диссертационное исследование представляет собой научное исследование исторического развития основных концепций естественного права в истории учения о праве и государстве.

Сформулированные в данном исследовании теоретические положения и выводы, в определенной степени развивают теоретические представления о праве и правовом государстве, о юридической мировоззрении и правовой культуре.

В практическом плане результаты данного исследования представляет собой определенный научно-познавательный итог, который может быть использован в дальнейшем при исследовании проблем, связанных с установлением правового общества, гарантии прав и свобод личности

Именно этим определяется довольно высокая степень актуальности историко-теоретических и политико-правовых изысканий в области теории естественного права.

Основные положения диссертации нашли свое отражение в опубликованных автором научных статьях, а также обсуждались на различных научно-практических семинариях.

ARTEM KHACHATRYAN, son of GAGIK

**FORMATION AND DEVELOPMENT OF NATURAL LAW CONCEPTS
IN WESTERN-EUROPEAN LEGAL STUDIES
(HISTORICAL-THEORETICAL ANALYSIS)**

Thesis for a Doctor's degree in the field of 12.00.01 "Theory and History of State and Law, History of Legal Studies".

Defense will take place on June 28, 2011 at 16:30 at the meeting of specialized Higher Examination Board of Law 041 at Academy of State Administration of RA (at the address: 8, Kievyan Str., 0028 Yerevan).

S U M M A R Y

The present thesis is devoted to historical-theoretical problems of natural law concepts. Choice of the thesis theme is mainly specified by theoretical and practical topicality of problems. Studies in the field of natural law have always been the property of legal and philosophic knowledge from the first centuries of its formation in Antiquity epoch and up to postclassical concepts of XIX-XXI centuries. During historical development of science natural law stepped forth as the main idea in the system of studies about state and law, as well as ethical studies that proceeded from natural or godlike order of being or from human natural behavior. Historical function of theory of natural law consisted in expression of legal ideals relative to spirit of the age.

In spite of variety of concepts and some inconsistencies of natural law doctrine, how it stepped forth historically both in Antiquity epoch, and in the Middle ages, and New period, in spite of problems seeming almost unsolvable today, which revealed contemporary legal and philosophic-legal idea in it, all values of natural law, based on the principle of absoluteness, don't depend on changes of social-historical conditions and are not subject to devaluation. They are not product of state will and are higher of its momentary interests and needs. Therefore, they can step forth in the role of value criteria of lawmaking activity of state authorities of different historical periods.

Subject of the present thesis is content of ideas of historical development of natural law concepts, presented in the studies about state and law in the works of thinkers of the past and present, which are analyzed both within the frames of historical development of legal studies and with taking into consideration political-legal problems of contemporaneity.

Purpose of the study is accounting of problems of actual-legal science on the basis of general theoretic ideas of formation of legal and social state, theory and history of law, complex analysis of prerequisites, processes and results of development of natural law concepts, determination of main tendencies for further development of general theoretic bases of studies about state and law.


The present thesis is a scientific research of historical development, main concepts of natural law in history of studies about state and law.

Theoretical provisions and conclusions stated in this research develop theoretical idea about law and constitutional state, judicial world outlook and legal culture to definite extent.

From practical point of view the results of this study is a definite scientific-cognitive result that in future may be applied at examination of problems regarding determination of legal society, law guarantees and human freedom.

Enough high degree of topicality of historical-theoretical and political-legal survey in the field of theory of natural law is defined just by it.

General provisions of the thesis were reflected in research papers, published by the author; they were discussed at different scientific-practical seminars, as well.



05.02.2013

The paper is a... of...

... of...

... of...

... of...

ՀԱՅԱՍՏԱՆ

Հանրային կրթության նախարարություն
ՀՀ կրթության նախարարություն

ՀՀ Ազգային գրադարան



NL1710918

1885. 50. 30